

ՊԱՅՄԱՆՔ

Դիտար Զարբ օրեր կը հրատարակուի : Բաժանորդագրութեան տեղին է Ակոբեան-Սան Թիւ 15. Անվան համակ չնդունուի :

Պ Ի Տ Ա Կ

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին երեք մէկն . 70 ց. 60 Պօլսոյ և Գաւառաց համար (փօսթի գինը լրագրոյ վրայ) Հասին գին . . . ֆր. 50 Ծանուցման տղ . . . 70 ց. 5

Լ Ր Ա Գ Ի Ր

Ա. ՉԳ. Ա. Յ. Ի. Ն., ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արևեսուսուցից . — Պատկանական ծանուցում . — Քարոզչից օգնել . — Ուղիղ . — Շօգեմալին առաջին փորձ . — Վաւ շինկրրն . — Յասկուրիւնի ցիւրոց . — Քաղաքական . — Իրաւական :

Ա. ՉԳ. Ա. Յ. Ի. Ն.

ԱՐՈՒՆԵՍ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ

Չկայ արուեստ մը՝ որ կարեւորութեան և փափկութեան մասին կարեւոր ուսուցչական արուեստին հետ համեմատուի : Սա առաջինն է : Նորա գործելու տարրերն բանականութիւնն են : միտքին հետ է իր գործը և պաշտօնը, զայն պիտի հերիէ, մշակէ և արդաստորէ : Բայց և այնպէս չը կայ արուեստ մը որ ասոր չափ անհրկատ թողուած ըլլայ, հպիւ թէ գաղափար մը կրնաս գտնել որ սա ևս՝ որոշ, գիտարին և խիստ փափուկ արուեստ մի է : Ընդհանուր կարծիքը սա է թէ՛ ո՛ր է մարդ՝ որ ինքը թիչ մը բան գիտէ, կրնայ այլոց ալ ուսուցիչ լինել, որ շատ մեծ սխալմունք մի է, ոչ թէ թիչ՝ այլ խիստ շատ ալ գիտնայ, տակաւին ուսուցիչ չ'կրնար լինել, թէ որ ուսուցանելու արհեստը ինքը յատուկ դաս առած և կամ կըրթութիւն ըրած չըլլայ : Այս պատճառաւ մեր ազգին մէջ դաստիարակութիւնը շատ վնաս կրած է, և առիթ տուած է որ ազգին մանկութիւնը օտար դպրոցներ յաճախեն :

Այս վնասուց և այս չարիքներուն առաջը որ ինչ կերպով չենք կրնար աւելնել, բայց եթէ ուսուցչական արուեստը, ազգին մէջ ծաղկեցնելով, ճարտար և հմուտ ուսուցչաց կամ դաստիարակներու բանակ մը կազմուելու ենք, Բանակ մը որ իր բարձր կոչման փափուկ արուեստը օրինաւոր հըրահանգութեամբ և յատուկ կրթութիւնով ձեռք բերած լինի :

Ուրախ ենք որ դպրոցները օր քան զօր կ'աւելնան ազգերնուս մէջ, բայց ուր են այդ դպրոցներուն գլուխը կեցող կիրթ և արուեստին տէր ուսուցիչներ :

Կառավարութիւնը փաստաբանները քննութեան ենթարկեց, որպէս զի կարողն ու անկարողն տեսնուի և կարող եղողին ձեռքը օրինաւոր վկայական մը յանձնուի, եթէ նման տնօրինութիւն մ'ալ ուսուցչաց համար ըլլայ, արդեօք մեր ազգային ուսուցիչներէն քանին պիտի կարենայ օրինաւոր վկայագիր ստանալ :

Ներքէն քանին պիտի կարենայ օրինաւոր վկայագիր ստանալ :

Մենք կը փափաքինք որ ազգային պայծառ և փառաւոր դպրոցներ և վարժարաններ ըլլան, ուր մեր գաւազանները կարենան ուսում, դիտութիւն և կրթութիւն դանձել, ատիկա խիստ լաւ, բայց ատիկի աւելի կարեւոր բան կայ, այդ բոլոր բաները արդարացի մատաղ և պարզ մտքին մէջ զետեղող վարժ ձեռքեր, — ձեռքեր որ լաւ գիտնան բաները ինչ կարգաւ, ինչ եղանակաւ և ուր ուր զետեղելու են, — ըսինք թէ ուսուցչաց պաշտօնը բանականութեան հետ է. նորա գիտնալու են մտքին կազմութիւնը և նորա գործելու օրէնքները, որպէս զի կարենան զայն օգտակար և արդիւնաւոր կերպիւ գործել առանց վնասելու և առանց խանգարման : Մենք հին և աւրուած չնչին ժամայնաց մը դարբինին ձեռքը չենք յանձնել որ քան չենք և կօկելու հատոր, բայց մեր անմեղ գաւազանները անվարժ դաստիարակներու ձեռքը կուտանք ամենայնիւ անհոգ և անտարբեր մտաւով, կարծես թէ բանական միտք մը կտորած ժամայնացի մը չափ արժէք չունի :

Ուրախութեամբ կը տեսնենք որ այս մեծ կարօտութիւնը լրացնելու հիմ մը գրուած է ազգիս մէջ : Վարժապետական ժողովը կը յուսանք թէ մեծ ծառայութիւն մը պիտի ընէ այս մասին : Նա ունի ասպարէզ իր առջեւ այս կէտը նկատողութեան տեսնելու, և նորա վերաբերեալ միջոցներն ու դարմանները հոգալու :

Քաջայայտ ենք որ վարժապետական ժողովին անխնայ ջանքերը այս խնդրով վաղ ընդ փութ առաջին խնդրոց կարգը կանցնի, Վախճան մը ձեռք բերուած կը համարուի, երբ սկզբնաքայլը կ'աւելուի : Մենք այդ ժողովին վրայ այս համարումով կը նայինք :

Պատրիարքարանի կողմանէ հետեւեալ պաշտօնական ծանուցումը զըրկուած է մեզ ի հրատարակութիւն :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ազգային Հիւանդանոցի Մումարանը թէ Ս. Եկեղեցեաց և թէ Հարսանեկան հանդէսներու համար ընտիր և շքեղ մամեր պատրաստած ըլլալով, ի պաշտօնէ կը ծանուցանեմք համայն բարեպաշտ ժողովրդեան՝ որ այսուհետեւ Հարսանեաց մամերը հարկ է Ազգային

Հիւանդանոցի դրասեղեակէն առնուլ որ ի Մեծ-Նոր-Խան միջին յարկ թիւ 49. ուր պիտի գտնեն իրենց ուղած ձեռքն ու չափովը դեղեցիկ մամեր, դուրսը ծախուածներուն հաւասար գնով :

Թէև կը յուսանք թէ մեր սիրելի Ազգայինք ինքնայորդոր պիտի փութան իրենց ստակը փոխանակ օտարին քսակը լեցնելու, Ազգային Նուիրական Յարկի մը յատկացեալ անտուկին նուիրել, բայց սխալմունք և մոռացում չը պատահելու համար որոշուած է՝ որ այսուհետեւ հրամանագիր չը պիտի տրուի Պատրիարքարանէս, եթէ Հարսանեկան մամերն առած ըլլանուն վրկայագիրը չ'ներկայացուի :

Այս մասին Արժ. Քահանայ Հարց ջանքն ու օժանդակութիւնը ևս խընդրելով որ ի գործ գնեն ի նպատակ Ազգ. Հիւանդանոցի եղած այն որոշման :

Մնամ Աղօթարար Պատրիարք. Փոխանորդ ՅՈՎ. ԲԱՆԱՅՍ ԿՈՒՅԱՆ

Ի 6 Սեպտ. 1873
Ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պօլսո

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐՆԵՆԸ

Երևելի վարդապետ մը անդամ մը ըսաւ ծեր կնոջ մը՝ սրն որ առանց բարիք մը ընելու կարողութիւն ունենալու ասորեւն համար վնաս կը ցուցնէր անոր :

Դու ով կին՝ արդէն շատ բարիք ընելու վրայ ես. ամէն անգամ քարոզելու տեսնեմ ելած ատենս՝ դու օգնական ես ինձ : Երբայեւ կ'ինը մեծապէս զարմանալով հարցոց թէ՛ վարդապետն ի՞նչ բանով համոզուեր է այդ բանին :

Նա պատասխանեց. Նախ՝ ամէն քարոզութեան ատեն զքեզ քու տեղը կը տեսնեմ. այդ կ'օգնէ ինձ : Երկրորդ՝ միշտ արթուն կը տեսնեմ զքեզ, և աչքերդ շարունակ երեսիս ուղղեալ, այդ ևս կ'օգնէ ինձ : Երրորդ՝ շատ անգամ քարոզած ատենս աչքերէդ արցունք վաղելը կը տեսնեմ, այդ աւելի ևս կ'օգնէ ինձ :

ՈՒՂԵՂ

Ամենակարող Աստուածը մեր մարմինները ստեղծած ատենը մեր բարեւաւութեան համար ամենակարեւոր եղած մասերը շատ զգուշաւոր պաշտպանութեան տակ գրած է : Սիրաբ և թոքերը կողերով լանջով և ողնայա-

րով ծածկուած և պահպանուած են. և ստամբար կակուղ և առածգական մասերու մէջ գրուած է, որպէս զի հարուածներու կամ լեցունութեան գիմանայ : Այսու ամենայնիւ մտքին դահը եղող դործարաններու մէջ սոյն խմաստութիւնն ու հոգատարութիւնը ամենէն աւելի պայծառ կ'երևի :

Ուղեղը մեր կազմութեան մէջ ամենակարեւոր և միանգամայն ամենափափուկ մասն է. և զայն վնասէ պահ պանելու համար խիստ զարմանալի կերպով իրարու կցեալ շատ մը կտորներէ բաղկացեալ ոսկորէ ամանի մը մէջ պահուած է :

Գանկը՝ որուն մէջն է ուղեղը, ոչ թէ միայն այսպէս պատասպարեալ է, բայց անոր խոռոչը զօրաւոր թաղանթներով բաժնուած է որոց վրայ կրկնան ուղեղին այլ և այլ մասերը : Սովորական կարգի դէպք մը չկրնար անոր հասնել, և միայն մեծ բարձրութեան ինկած բաները կամ կարծր դործիքի մը ոյժիկն հարուածները կրնան անոր պատերը կտորել : Եթէ այսպէս չըլլար անհամար պատճառներ մեզ կրնային վտանգի ենթակայ ընել որով կամ պիտի կորնէինք և կամ բոլոր մեր կենաց մէջ թշուառ էակներ պիտի ըլլայինք :

Ուղեղին նիւթը կակուղ և ճերմակ է. և շատ հետաքրքրական կերպով մը զետեղեալ է : Անիկայ երկու մասանց բաժանեալ է, մին զլուսն առջևի կողմը և վերի մասը կը բռնէ և կ'կոչուի բուն ուղեղ. և միւսն ալ վարի կողմը և ետեւի մասին մէջ գրուած է և կը կոչուի փոքր ուղեղ :

Մեր մարմնոյն ամեն մասերէն աւելի առատութեամբ արիւն կ'ընդունի ուղեղը. քանզի թէպէտև դուն ուրեք երեք լիտրէն աւելի ծանրութիւն ունի, սակայն բոլոր արեան մէջ վեցերորդը անոր մէջէն կանցնի : Անոր ստորին մակերևոյթէն կանոնաւոր զոյգերով կ'երնեն այն ճերմակ լարերը, որք ջիզ կը կոչուին. և մարմնոյն ամեն կողմերը տարածուած են :

ՇՈՂԵՆԱԻՒ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

1807 ին, Յըլթօն՝ Հընտսըն գետին վրայ շոգեհատի առաջին փորձը ըրաւ. յորժամ բոլոր երկիրը հաւատք չէր ընծայեր և կը ծաղրէր այսպիսի դաղափար մը :

Երբոր իմ առաջին շոգեհատս կը շինէի՝ ըսաւ ինքը Սոքոլի անուն Գատաուրին, «Նոր Եօրքի հասարակութիւնը այս նպատակիս վրայ կամ ա-

րին վրային կամ շրջանակին մէջէն կը ցատկէ, չէ՞ թէ դիպի յառաջ կը ցատկէ. այլ դէպի վեր և այն շարժումը որ արդէն ստացած է ձիուն վազելէն, կը տանի և կը հասցնէ գայն ձիուն, լարին վրայէն կամ շրջանակին մեջէն :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԱՂԱՔԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
Ներկայ ամսոյ 4րդ օրը՝ Գաղղիոյ ազգը Հանրապետութեան երրորդ տարեգարձը կատարեց, և արժան է ըստեր որ բաւական մեծ բան մ'էր այնպիսի գահալիւստական կերպով հընչակեալ կառավարութիւն մը մինչև ցայսօր ապրի դէպք անուամբ :

Կայսրութիւնը որ այն փոթորկայ յոյզ զիշերուան մէջ անկաւ՝ երբէք չկարողացաւ վերստին կանգնել, ոչ ալ որ և է Միապետական կառավարութիւն մը անոր տեղը կրցաւ բռնել: Պաշտօնական տիտղոսներու և կառավարական ձեւերուն նայելով՝ Գաղղիա դեռ ևս Հանրապետական է, և սակայն անոր առաջին հիմնադիրները դրէթէ առանց բացառութեան աներևոյթ եղած են: Պ. կամպէթթա դեռ երևոյթ մը ունի երկրին մէջ, բայց իւր տեղը ընդգծաբար սեպուած կուսակցութեան մէջ է, և նա իշխանութեան մէջ եղող Հանրապետականաց յաւէտ թշնամի համարած է քան թէ բարեկամ: Գաղղի ներկայ Հանրապետութեան ապագային՝ ահեռուն վկայութիւնը այն է թէ նա կարի միջին է, և Գաղղիոյ քաղաքագիտաց ամենէն վերջին տեսութիւնը այն է թէ Աստուածային իրաւամբ կարգեալ թագաւոր մը կարող է վերջ տալ այս վերջին յեղափոխութեանց, Միւսայն ատենն կառավարութիւնն էլ յաջորդաբար նոր կերպարանափոխութեանց մէջէ կանցնի: Նախ ԿԱՄՊԻՒԹՅԱՆ և ԲՕՇՅՕՐԻ Հանրապետութիւնը Պ. Թի-Լի-Ի Հանրապետութիւնը եղաւ, և յետոյ Պ. Թի-Լի-Ի Հանրապետութիւնը ՄԱՔ-ՄԱՆՅՕՆ Մարալախտիւնը եղաւ: Այս երեք Հանրապետութիւններէն ի զատ ուրիշ մ'ալ կայ որ ԳՕՄՄԻՆ անուամբ երևան երաւ և կարճ միջոցի մը մէջ վերստին խափանուեցաւ, զոր միայն ուժով կարելի եղած է ընդձեռալ պահել այս վայրկեանիս:

Գաղղիացի համբաւաւոր հեղինակ մը գեղեցիկ ձեւերով թիւններ ընելով կը հաստատէ որ Գաղղիոյ համար միայն Հանրապետութիւնն է կառավարութեան բնական և մինչև իսկ անհրաժեշտ ձեւը: Եւ սակայն Գաղղիացուց փորձած ամենայն կառավարական ձեւերուն մէջ Հանրապետութիւնը ամենէն կարճ տևողութիւնը ունեցած է և ամենէն նուազ ժողովրդային եղած է: Առաջին Հանրապետութիւնը որ 1792 ին հռչակուեցաւ և 1793 ին մեղադրուեցաւ բազմութիւն կուսակցութեանց պատճառաւ՝ թէպէտ անուամբ կրնար մինչև 1804 յորժամ կայսրութիւնը հաստատուեցաւ. երկրորդը հաստատուեցաւ 1848 ին և 1851 ի պետական հարուածով կործանեցաւ: Երրորդը այժմու հանրապետութիւնն է որ այժմ իւր չորրորդ տարւոյն մէջ կը մտնէ, և թէպէտ ևս խառնահոլութիւն ընելը դժուարին բան է, սակայն մարդ չհամարձակիր ըսելու թէ՛ նա իւր չորրորդ տարեգարձը պիտի տեսնէ. և սակայն թէ որ մինչև այն ատեն տեսնելու ըլլայ՝ ոչ թէ իւր զորութեան

կամ ազգէն գտած ընդունելութեան պատճառաւ պիտի ըլլայ, այլ պատճառը պարզաբար իւր թշնամեաց ուրիշ կառավարական ձեւի մը վրայ միաբանելու անկարող ըլլալնն պիտի ըլլայ: Սկիզբէն մինչև վերջը Հանրապետութիւնը ճշմարիտ բարեկամներ չունեցաւ, երբէք Հանրապետական նախագահ մը չունեցաւ և միայն մէկ ատեն մը հանրապետական պաշտօններ ունեցաւ:

Իրողութիւնը այս է որ թէպէտ նա գոյութիւն ունի, բայց կանոնաւոր գոյութիւն մը ունենալը երբէք ճանչցուած չէ: Արդայն ժողովոյն մէջ մեծամասնութիւն մը կայ որ անոր որոշակի հաստատութիւն անհերքելի գէտքուէ տալու պատրաստ է, և զայն իբր Ս. Փ. Ժամանակեայ կառավարութիւն, կը ճանչնայ միայն:

Յայտնի կ'երևի թէ Գաղղիոյ մէջ կարելի է որ և է բան սկսել. բայց բան մը չկայ որ մնայուն կերպիւ հաստատուի. սակայն յայտնի է նաև որ կայսրութիւնը և Միապետութիւնը Հանրապետութիւններէն աւելի երկարատև եղած են: Ասոնք առաւել զօրութիւն ունին և իրենց քաղաքական հաստատութիւնը առաւել խորին է: ԼՈՒԻ ՓԻԼԻՒՄԻՆ իշխանութեան ներքեւ պաշտօնէութիւնը, գաւառաց պաշտօնապետները և բանակը հարազատ Օռլէանական էին: ԼՈՒԻ ՆԱՓՈԼէՕՆԻ ներքեւ ասոնք հարազատ Պոնտիփապոլիս էին: Այս կառավարութեանց իւրաքանչիւրը իւր տկար կողմերը ունէր ինչպէս որ դէպքերը հաստատեցին, սակայն և այնպէս իւրաքանչիւրն ըստ կազմակերպեալ տեսչութիւն մը կը ներկայացունէր, որոյ բոլոր մասերը իրարու հետ համաձայն էին, և ազգին սպառնալուծեանը վտանգ մինչև մահացու և տարաբար դէպքեր մը տան: Հանրապետութիւնը այս օր նոյն դիրքը չունի: Անոր գլխաւոր կուսակիցները — այն անձինք որ բարեպատէ առիթ մը գըտնելով իսկոյն հռչակեցին զայն — չունով ուրիշ յաջորդներ ունեցան իրենց՝ որք մեծաւ մասամբ հանրապետութեանէն ազատելու կամ փոխադրող էին և կամ ոչ դժկամակ, Պորտոյի մէջ Արդային ժողովոյն առաջին դործն եղաւ Հանրապետութիւնը այնպիսի դիրքի մը մէջ դնել որ երբոր կամին կարենան զայն տապալել: Իրաց վիճակը յառաջ դնաց առանց ընդմիջման. միայն այս պատճառաւ որ ոչ ոք դիտեր թէ ինչպէս փոփոխութիւն մը յառաջ բերելու է, բայց ճշմարիտ ներկայ Հանրապետութիւնը Պ. կամպէթթայի Հանրապետութիւնը չէ:

Արդէն Պ. Թի-Լի-Ի պահպանողական համարուած էր, և այժմ նորա յաջորդը եւս առաւել պահպանողական է. և արդի դժուարութիւնը այն է թէ ինչ կառավարութեան ձև ընդունելու է: Մտերս Պ. ճՕՆ ԼԷՄՈՒԱՆ անուն նշանաւոր Խմբագրապետ մը յանկարծ հրատարակեց ի զարմացումն համայն Բարիզու, թէ ըստ իւր գատման Հանրապետութիւնը ոչ ևս հնարաւոր է և թէ հետևաբար Միապետութիւն մը անհրաժեշտ է: Յիշեալ Խմբագրապետին հետ վիճաբանութեան մտան շատերը. բայց զարմանալի է որ ամենուն խօսքը այնպիսի եղանակաւ մ'էր որ ցոյց կուտար թէ իրօք Հանրապետութեան գոյութեան չէին հաւատար. Պր. ԼԷՄՈՒԱՆ կը դրէ թէ մինչև անցեալ Մայիս ամսուան մէջ կը կարծէր թէ

հնարաւոր է Գաղղիոյ մէջ Հանրապետութիւն հաստատել, բայց քանի մը դէպքեր համոզեցին զնա թէ սխալած էր:

Մէկ իրողութիւն մը կայ որ բացայայտ կերևի: Գաղղիոյ մէջ Հանրապետութիւն մը կայ, բայց հանրապետականներ կը պահին և այս է գըլխաւոր պատճառը անոր յողորմ դիճակ մը ունենալուն:

Սարս-Ալթէմպուրի դուքսը Խրիմէն վերադառնալով Կ. Պոլսոյ մէջ քանի մը օր անցուց և անցեալ Ուրբաթ օր Օգոստոսիա Սուլթանին ներկայացաւ Տօլմա-պահճէի պալատան մէջ: Օգոստոսիա ինքնակալը հետևեալ օրը բաց քառաձի կառք մը նստած Պէյլի-քաէրէի Գերմանական Դեսպանատունը գնաց Դուքսին վոխադարձ այցելութիւն մը տալու: Կիրակի օրը Դուքսը նորին վեհափառութեան հետ նախաճաշիկ ըրաւ ի Տօլմա-պահճէ. և ճաշէն յետոյ Պոսթօլի վրայ գտնուած զրահաւոր նաւերը տեսնելու գնաց որք դրօշակներով զարդարեալ ըլլալով ողջունատուութեան թիւղանօթներ արձակեցին:

Լէվանթ-էրալտին մէջ հետևեալ կը կարգանք:

Շարաթ օր լրագրի մը գրածը ամենեւին ճշմարիտ չէ, թէ Ալի Բիգապէյ Պալատան Աջարողապետը իւր պաշտօնէն հանուած է: Այդ ըստը այնքան անստույգ է որքան որ անոր պատճառ սեպուած դէպքին պատճառութիւնը: Պատմուած է թէ երբոր Սարս Ալթէմպուրի դուքսը իւր ուղեկիցներով հանդերձ սահմանաւ ժաման Տօլմապահճէի պալատը դացին, պահպանները, զոտք առաջուց իմաց տրուած չէր այս այցելութիւնը, արգիւնցին այցելուները յոտաբը երեւէն, Բարբախտաբար, ըսուած է, նորին կայսերական վեհափառութիւնը նոյն միջոցին պատահանէն դուքս կ'նայէր և սխալմունքը տեսնելով պալատին պաշտօնակալներէն խրկեց շուտով Իշխանը ընդունելու, մի և նոյն ատենը ինքն ևս սանդուխներէն վար իջնելով և պալատին առջևը իշխանը ընդունելով: Այս դէպքին պատճառաւ Ալի Բիգապէյ իւր պաշտօնէն հանուած է կըսէ նոյն լրագիրը: Բաւ է ըսել թէ Սարս Ալթէմպուրի Դուքսը առանց որևէ ընդգրկման պալատը մտաւ. և պահպանները ընդունեցին զայն սովորական պատուով թէ նորին վեհափառութիւնը պատմուածին պէս բան մը ըրած չէ ամենեւին այլ իւր այցելուները որոշեալ ժաման ընդունած է սովորական կերպիւ. և իւր սովորական մեծաննութեամբ արժանալիք ընդունելութիւն մը ըրած է, և թէ Ալի Բիգապէյ կիրակի առաւօտ Պալատին մէջ նախաճաշ ըրաւ և իւր պաշտօնին մէջ կը շարունակէ: Մեր առած տեղեկութեան նայելով Դուքսը առաւօտուն կանուխ պալատը դընաց, որպէս զի օրը Ուրբաթ ըլլալով կարող ըլլայ յանձնաթու դիտել Մէլալիլըզի հանդէսը. Դուքսը նոյն հանդիսին վրայ Օգոստոսիա Սուլթանին իւր զմայլումը յայտնած ատեն, նորին վեհափառութիւնը յուսոյցոյց յայտնեց որ յառաջմանէ տեղեկ եղած չէր Դուքսին սոյն հանդէսը տեսնելու փոխաբին վրայ, քանզի յայնժամ Միլիթի ինձոյր բոլորովին Դուքսին դորձածութեան պիտի յանձնէր:

ԵՏԵՂՈՒՐԿԻ ԳՈՒԲՐՈՒՆ ԵՍԵՆՍԵՆՆԵՐ

Անդղիոյ թագուհւոյն երկրորդ օրդի Ալպէրթ իշխանը որոյ տիտղոսը Դուքս Էտրիպուրիլի է, շարժուա Կ. Պոլս հասաւ, Ռուսաստան երթալու համար ուր Ռուսիոյ կայսեր դուստրին հետ պիտի ամուսնանայ:

Անդղիոյ մէջ օրէնք կայ որ Արքայական զարմին բոլոր անդամները Անկլիքան կոչեցեալ բողոքական եկեղեցւոյն վերաբերելու են, և որովհետև Ռուսաց կայսեր դուստրը կրօնիւ Յունադաւան է, դաշինք եղած է երկու կողմանց մէջ որ թէպէտ Ռուսաց կայսեր դուստրը աղատ պիտի ըլլայ իւր կրօնը դաւանելու, սակայն եթէ զաւակներ ունենան Անդղիոյ բողոքական եկեղեցւոյն կը թուլութեամբ պիտի մեծնան:

Հնդկաց Թալիկ անուն լրագրոյն թղթակիցը այս նիւթոյն վրայ հետևեալ կը գրէ:

Կայսերական իշխանուհին կարի հաճոյսկան դէմք մը ունի, և որ լաւագոյնն է բոլոր Ռուս Արքունեաց մէջ գտնուող անձինքը անոր ընտուրութեան վրայ իրենց զմայլումը յայտնած են: Հեզ և քաղցր ըլլալով՝ ընտանեկան դործոց մէջ ևս բարձ ճաշակի տէր է, կըսեն: Իւր հրատարակչ բնութեամբ բոլոր արքունեաց մէջ սիրելի եղած է: Կայսրը կ'պաշտէ զինքը և քանի որ իւր միակ դուստրն է անհաւատարի չէ այս: Հետաքրքրութիւն ունէի զիտնալու թէ կրօնական դժուարութիւնը ինչպէս կարելի եղաւ վերցուել. քանի որ Ռուսիոյ Արքունիքը յոյժ նախանձախնդիր է այս կէտին մէջ, բայց իմացոյց որ այնպիսի կարգադրութիւն մը եղած է որ ոչ դուքսը ոչ ալ դըքսուհին իրենց կրօնական գաւառանքը փոխելու պիտի հարկադրեն, այլ երբոր զաւակներ ունենան անոնք Անդղիոյ եկեղեցւոյն հաւատքով պիտի մեծնան: Ես այս ամուսնութեան վրայ այսչափ կը խօսիմ, որովհետև հոս Հնդկաստանի մէջ բոլոր ժողովուրդը և մասնաւորապէս բնիկ թագաւորները իշխանները և բոլոր գլխաւորները էտրիպուրի դուքսը իբր ամենապատուական Արքունի ընտանիքէն միայն ինքն է որ Հնդկաստան եկած է այցելութեան. և անտարակոյս մեծ հաճութեամբ կը նային նորա ապագայ երջանկութեանը վրայ: Յաւալի է որ դըքսին Հնդկաստան եկած միջոցին իշխան Հնդկաց տիտղոսով չպատուեցին զինքը, այսպիսի տիտղոս մը շատ վայելուչ պիտի գար Ռուսիոյ կայսերական իշխանուհւոյ մը ամուսնոյն, նոյն ժամանակը Ռուսիոյ կայսեր դուստրն ալ իշխանուհի պիտի ըլլար այն երկրին, որոյ ցանկացող է կայսրը կըսուի, և այսպիսեաւ առ այժմ Ռուսաց կայսրը կընար գոհ ըլլալ Հնդկաց երկրին նկատմամբ:

Հնդկաց Թալիկ անուն լրագրոյն խօսքին նայելով կէս դար յառաջ Հայ պարոն մը կարկառայն Հայոց եկեղեցւոյն 14,000 լիւրայ կտակաւ թողեր է, և դեռ նոր գտնուէր է կալկաթայի Բարձրագոյն Ատենին արձանագրութեանց մէջ:

ՎԻՔՏՈՐ ԵՍԵՆՍԵՆՆԵՐ, ԻՎԵՆՏԱ

Խառնիկ թագաւորը վիճնայի մէջ փառաւոր ընդունելութիւն մը գտաւ: Մեծ զինուորական հանդէս մը տեղի

ունեցաւ ի պատիւ իտալիոյ թագաւորին : Այս զինուորական հանգիստին մէջ իտալիոյ թագաւորը Վիքթոր Էմանուէլ Աւստրիացի գնդապետի մը համագործակցութեամբ հազար էր, և սիրալիր ընդունելութիւն մը գտաւ : Յետոյ նորին Վեհափառութիւնը Աւստրիական զօրաց գնդի մը գնդապետ անունանցաւ որ այսուհետեւ իտալիոյ թագաւորին դուռը պիտի անուանի, Զօրահանգրեւէն յետոյ փառաւոր խընջոյք մը տրուեցաւ Լուքսեմպուրկի Պալատին մէջ :

Վիքթոր Էմանուէլ Վիեննայէն Պէրլին երթալու մեկնեցաւ : Ամենուն վերադարձինը այն է որ ժողովուրդը շատ մեծ սիրով և յարգանքով ընդունեցին զինքը Վիեննայի մէջ : Աւստրիական լրագրիք առ հասարակ կը կարծեն թէ իտալիոյ թագաւորին ի Վիեննա ըրած այցելութիւնը երեք կայսերաց Պէրլինի մէջ ըրած տեսակցութեան կատարելութիւնն է, և թէ Աւստրիոյ կայսերութիւնը իւր խաղաղասիրական ջանքերուն մէջ յաջողութեան պիտի հասնի :

Հեռագրաւորը կճանուցանեն թէ իտալիոյ թագաւորը Պէրլին հասնելով հոն ալ լաւ ընդունելութիւն գրտած է : Ի պատիւ նորին Վեհափառութեան մեծ հացկերոյթ մը տրուեցաւ Պալատին մէջ : Հացկերոյթին մէջ Գերմանիոյ կայսրը բաժակ մը առաջարկեց ընելով « Վասն կենդանութեան իմ եղբորս և բարեկամիս իտալիոյ թագաւորին, որոյ Վիքթոր Էմանուէլ պատասխանեց բաժակ մը առաջարկելով « Վասն կենդանութեան իմ բարեկամիս և հին դաշնակցիս, կայսեր :

Ճաշէն յետոյ Գերմանիոյ կայսրը և իտալիոյ թագաւորը ի միասին Թատրոն դադին, ուր ծախահարութիւններով ընդունուեցան :

Թագաւորը Բրուսելական ձիւնոր գնդի մը գլուխ անուանեցաւ :

Պէրլինի կէս պաշտօնական լրագրիք իտալիոյ այցելութիւնն իբր խաղաղութիւնը երայնաւորող գէպք մը կը համարին, բայց, կըսեն, այժմ իտալիոյ թագաւորը վրդովելու սպառնալիք մը չկենայ չարի չկայ որ առաւել պաշտօնական դիրք մը տրուի քաղաքագիտական տնօրինութեանց :

Ամսոյ 23ին Պարսից Շահը Դէհլան Պարսկաստանի մարտադաշտը հասաւ, և ժողովրդեան կողմանէ մեծ պատուով ընդունուեցաւ :

Իտիւնպուրկի Դքսին Կ. Պօլիս գալուն առթիւ Օգոստոսիան Ինքնակալը Թարապիտա Անդրիոյ դեսպանատունը գնաց կառքով : Օգոստոսիան Ինքնակալին այցելութիւնը 10 վայրկեանի չափ տևեց, սակայն նորին Վեհափառութիւնը յատուկ խնդրեց տեսնել Տիկին Էլիզաբէթ Անգլիոյ դեսպանին տիկինը, և նորա ձեռքը թօթուեց շատ քաղաքավարական և սիրալիր կերպիւ մը, կըսէ Լէվանթ Հեռալտ :

ՉՄԻՌՈՒՅՈՒՄ ՄԵՋ ՄԵՃ ՀՐԿԻՉՈՒԹԻՒՆ ՄՐ

Չմիւռնիոյ մէջ կիրակի գիշեր ժամը Յին ատենները մեծ հրկիզութիւն մը պատահեցաւ քաղաքին տանէն կեզրան տեղը : Երկու փողոցներու մէջ 100ի չափ տուն այրեցան և կըսուի

թէ բոլոր կորուստը 60,000 իրացի արժողութիւն ունի որոց 22000 սակին ապահովագրութեան դրուած էր :

ԽԱՌՆ ԼՈՐԻՆԵՐ

— Երէկ և առջի օրը սաստիկ հիւսիսային արևելեան հով մը փչեց և Մարմարայի ծովը փրփրադէզ ալիքներով ծածկուած էր : Հինգշաբթի գիշեր փոթորիկը այնքան սաստիկ էր մեծ կղզւոյն մտերը որ անցորդներուն շարքերու շարքերու մեծ զգուարութիւն կրեցին նաւամատոյցներուն մտենալու : Պատահեցաւ որ մէկ քսիի նաւամատոյցներու երեք չկրցան մտենալ և անցորդները ցամաքը հանել : Թիւ 3 չոգենալը մասնաւոր զգուարութեան մը հանդիպեցաւ : Փրինքիբոյն նաւամատոյցը հասնելով կարող չեղաւ անոր մտենալ մինչև որ երեք քառորդ ժամանցաւ : Նոյն միջոցին անցորդ մը նաւէն ցաթկեց և ցամաքը ելաւ և չորս ուրիշներ ալ նաւակով ցամաք ելան : Անցորդները վախնալով որ ուրիշ աստիկ մը պէս կրկին Գարթալ չտարուին, ոմանք պատրաստուեցան նաւամատոյցին վրայ ցաթկելու ամէն անգամ որ նաւը նաւամատոյցին կը մտենալ և երբ որ վերջին անգամ նաւը մտենալու վրայ էր Տանկի քովս մը առջևի կողմէն ցաթկեց ճիշդ այն վայրկեանին որ նաւը մաւամատոյցին ծայրին զարթաւ, այս սարսուէն քուէր զլրեցաւ և ծովը ինկաւ : Մէկէն չուաններ նետուեցան, որոնցմէ մին բռնելու յաջողեցաւ : Բայց կամ իր չփոթութենէն պատճառաւ և կամ իր ծանր վերաբերէն ընկճելով չուանը թող տուաւ և ուրիշ օգնութիւն մը ըլլալէն յառաջ թէ նաւուն վրայ և թէ ծովերէրը գտնուող բազմութեան առջև ծովուն մէջ ընկողմեցաւ : Ուրիշ անցորդ մ'ալ ցաթկեցու ատեն քարին զարնուելով վնասուեցաւ :

Դեռ նաւերկութեանց լուրեր հասած չեն, բայց մեծ վախ կայ որ շատ զգուարութեան նաւատներ իրենց գերեզմանները Սև ծովուն տլեաց մէջ գըտան :

Հէյիֆոն նաւը որոյ մէջ է Լատիպուրի գուքը՝ անշուշտ երկիւղալի անցք մը ունեցաւ Սև ծովէն :

— Այս Դշ. օր ժամը տասն և մէկին միջոցները Երբէթի Խայրիէի 11 թիւ շոգենալը կամուրջէն իւսկիւտար երթալու ատեն Յուկանաւ մը (չէքսիբմէ) վրան կուգայ և նաւուն յետոյքին կողմէն կը հարուածէ, ուր կանայք նստած լինելով ութ կամ տասը տարեկան տանկի աղջիկ մը գըլուկը ջանախտուելով իսկոյն կը մեռնի և մօրն սրունքը կը խորտակուի և մէկ փոքր եղբայրն ալ գլխէն կը հարուածի, որ լաճնուս նայելով նաւամատոյցը հասնելէն քանի մը վայրկեան ետքը տղան ևս կը մեռնի :

Ահուելի արկած, կը փորձուի մարդ հողոյն մէջ հառաչելով աղաղակելով թէ՛ արդեօք սակաւ ինչ զգուարութեամբ և արթուն հսկողութիւն չէր կրնար այդ ահուելի արկածին առաջը առնել . . . :

Ինչ եղաւ այդ ողորմելի մօր վիճակը, կրնայ գրիչ նկարագրել նորա ցաւն ու զգացումները, ինչ բառերով կրնաս միտնալ զայն : Բոլոր ճամբորդները ճիճ բարձրած՝ կըսէ սկանաւոր մը, սկսան լալ այս սրտաճմլիկ տեսարանին վրայ :
Վերջէն իմացանք որ նոյն գիշերը մայրը ևս մեռեր է :

Պէրլին հասած լուր մը կը ծանուցանէ թէ Մէրլիոյ երկաթուղեաց շինութեան համար պայմանագրութիւն մը ընելու նպատակաւ հաստատուած մասնագործը իւր նիստերը պիտի սկսի Մէրլիոյ մայրաքաղաքին մէջ յաջորդ ամսոյն 18 ին :

Անցեալ ուրբաթ գիշեր Էմբրիկեանի թումբին վրայ գտնուած Ս. Նիկողայոսի Յունաց մատուռին մէջ գողութիւն մը տեղի ունեցաւ, մատուռն մէջ գտնուած բոլոր մասունքը և նրբերեալ ընծայները կողոպտուելով, և որովհետև այս սրբարանին շատ մեծ յարգանք կուտան Պօսփօրի երկու կղերացի վրայ գտնուող Յոյն հաւատացեալները վանորոյ գողութեամբ բաներուն արժէքը 400 իրացէն աւելի կը հաշուուի : Մատուռին միայնակ պահպանող որ ծերուկ մըն է, սովորութիւն ունէր գիշերը գիւղին մէջ իւր բնակարանը քաշուելու թողելով գմատուռն միայն նորին Պրազան պաշտպանին : Գողերը գեռ բռնուած չեն, և այս սրբապղծութիւնը այն աստիճանի շտապեցան է Էմբրիկեանի և Պօսփօրի գիւղի Յոյն բնակիչները, որ կառավարեն խնդրել Պատրիարքէն, որ պէտքի ապագային մէջ յիշեալ սուրբ սեղանին տնօրինութիւնը և հոգատարութիւնը իրենցմէ կազմեալ մասնագործով մը յանձնէ :

Լ. Վ. ԱՄՏ ՉԻՐԱՍ

Պ. Ֆրիլի Լիդի Յունաց թագաւորին առանձին քարտուղարներէն մին անցեալ երկուշաբթի Կ. Պօլիս հասաւ, Խրիմ երթալու համար, ուր նորին Վեհափառութեան նամակներ պիտի տանի Օղկա թագուհոյն որ այժմ Լիվաթիայի մէջ կը գտնուի Ռուս կայսերական ընտանեաց հետ ի միասին :

Կարոյս Լաթարհաղի իշխանը որ Հունգարիոյ առաջին ընտանեաց միոյն կը վերաբերի, ինքզինքը սպաննեց 53 տարեկան ըլլալով : Երկար ժամանակ ողնայար ըստած ոսկեր ցաւ ունէր և ըստած էր թէ անբուժելի է : Իւր քրօնը հետ բնակելով՝ անոր բացակայ եղած միջոցին, մերամաճոտ և յուսահատ փճակի մը մէջ ըլլալով ատըրճանակով ինքզինքը զարկաւ, և գետակը իւր սրտէն անցնելով անմիջապէս մեռաւ :

— Բաշխտ պէյ Օգոստոսիան Ինքնակալին բանակի օգնականը Միլիտարիսեան աստիճանի բարձրացնող հրովորակները յեղպտոս տանելով շքեղ արարողութիւններով կարգացուեցան Գահիրէի մէջ ի ներկայութեան Խտիվին և իշխանաց ու նախարարաց : Միւշի իրութեան աստիճանին բարձրացողներն Իսկաիլ Մահիպ իսաչա Գանճոց պաշտօնեաց և Արսաֆիլ գործոց պաշտօնեաց նուպար փաշա, Հրովորակները կարգացուած իրկուներ Իսկաիլ Սատըզ փաշա փառաւոր ինճոյք մը տուաւ, և հետեւեալ իրիկունն ալ նուպար փաշայ ինճոյք մը տուաւ : Հրաւիրեց մէջ կը գըտնուէին Խտիվին սրբէրը և փետայնի եղպտական Նիլ լրագիրը կըսէ թէ՛ այս առաջին անգամն է որ Միւշի իրութեան բարձր աստիճանը Գրիստոնէի մը կը շնորհուի : Թէպէտ այս խօսքը ճշմարիտ է նուպար փաշա եղպտական մէջ առաջին Գրիստոնէայի ըլլալով որ այս բարձր պատուոյն հասած է, սակայն նորին փետմութիւնը առաջին Գրիստոնէայ Միլիտարիսեաց փաշան Օգոստոսիան Սուլթանին աջին բժիշկը Միլիտարիսեաց նայնպէս Ֆալիդ փաշա կայսերական բանակին գըլխաւոր Գեղապորձը, Ֆրանքո փաշան Լիբանանու կուսակալը և անոր նախորդը Տալուս փաշան նոյն բարձր աստիճանը կը կրէին, վերջին երեւը աղբաւ հայ են :

ԾԱՆՈՒՅՈՒՄ
Ս. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ
ԵՒ
ԸՆԿԵՐԱՑ

Վ.Ա.Ս.Ա.Ս.Ա.Ն.Ը ՄԵՋ ՄԻՇՏ ԾԱՌՈՒԿ
Կ'ԳՏՆՈՒԹԻ Ա.ՉԳԻ Ա.ՉԳԻ Վ.Ա.Ս.Ա.Ս.ՔՆԵՐ
Տան կարասեաց վերաբերեալ,
Արանց և կանանց հաղուստի,
Անձնական գործածութեան,
Ճամբորդութեան,
Դրասնեակի գործածութեան,
Դպրոցաց,
Պատրաստ դեքորէից, և այլ մարգկային հանգստութեան վերաբերեալ գործածական ամէն կարգի վաճառքներէ մէյմէկ ընտէր մասեր :
Յառաջիկայ եղանակին համար նոր եկած վաճառքներուն գլխաւորներն են,
Դորդ (հարը) ընտիր և դեղեցիկ տեսակներէն : Բաշխտներու համար շատ դեղեցիկ թէք և քանաթ : Սկովալիսկան կոշուտ—և այլ բուրգէ աղնիկ կտաններ կանանց հաղուստի համար : Սեա կերպոս խիստ ազնիւ տեսակներէն : Հօվաճոց և Անձրեանոցներ : Բուրգէ գուլպաներ արանց և կանանց համար, նոյն գոյնգոյն սղայոց համար : Չանաղան ցիպիներ : Փանեկա շապիկներ : Թաշկինակներ, նաև Ամբրիկայի Սօպաներ ու ձեռքով և ոտքով բանեցնելու կարի գործիքներ :
Ս. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ՏԵՐ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՎԱՍԱՒԱՍԱՆ
Ի ՂԱՒԱԹԻՍ

ԱՉԳ

Գրնալը կղզւոյն մէջ քանի տարին. րէ ի վեր յաջող փորձերով ստուգուած ամենաազնիւ տեսակ շերամի (իվէք պէօճէյի) հունտ կայ ծախու մէկ ու կէս օգ. գ. այի չափ :
Ուղղող կրնայ Լրագրոյս գրասենեակէն տեղեկութիւն ստանալ թէ զնոյն թէ անոյն օրոյն :

Գ Ր Ա Մ Ա Կ Ա Ն

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԱԹՂՈՒՅՑ

Գալարթիա 14 Սեպտեմբեր	
Ընդ. Պարտ. Արժ. բաց . . .	55.58
դոց . . .	—
բարձր գին . . .	56.59
ցած » . . .	56.54
Բումբիլի Արժ. . .	ձր. 145 1/2
» . . .	85
Փոխաւ . . . 69ի	516
» . . . 63ի	535
» . . . 65ի	544
Ստիւթի ժնէրալ Լ. Ս. . .	10.18
Գրեւի Ստիւթի ժնէրալ » . . .	5. 8
Գանճատոս 1852ի » . . .	—
Ստիւթի Օթթոսի » . . .	5.55
Պանք ար Օթթոսի » . . .	7. 7
Գրեւի ժնէրալ Լ. Օ. . .	14.40
Պանք Վէրիսի » . . .	5.24
Թրամվէյ » . . .	12.60
Բըրօր . . .	12 փապ
Դրասնեակը . . .	0/0 14—15
Փոխակր. ի Լոստ. եւ մն. . .	108 1/4
» . . . Բարիս . . .	25.50

ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՅՑ

Օսմոսիկն 100 պը. ի հաշուով	
ըր. Փր.	109.16
Գալ. »	87.14
Բօլ. »	89.15
Գըրմից	51.20
Ճերմակ մէծիտ սուր. . .	101.12
Հինգնոց	105.20
Մէթալիք	105.50
Պրինձ	120.10

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ Խ. Հ. ՍԻՄՈՆ ԻՌԹԻԲԵՆԵՆ
ՏՊԱՐԻՌՈՒԹԻՒՆ ԱՐԱՄՏԱՆ
Կ. ՊՈՒԹՍ
Չափագրութեան փոլ. Ակրեան խան Թ. 15